ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ГОСУЧРЕЖДЕНИЙ АРМЕНИИ

UNION OF STATE, LOCAL GOVERNMENT AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF ARMENIA

«17» ապրիլի 2019
N 21-01

Երևանի քաղաքապետ
պարոն Հ. Մարությանին

Հարգելի պարոն քաղաքապետ

Համաձայն «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի՝ իրազեկում ենք Ձեզ, որ Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը 2019թ. մայիսի 1-ին կազմակերպում է խաղաղ երթ Աշխատանքի օրվա կապակցությամբ:

Երթը կմեկնարկի Ավետիք Իսահակյանի արձանի մոտից (մետրոյի «Երիտասարդական» կայարանի մոտ)՝ ժամը 12:00-ին, կշարունակվի Աբովյան փողոց-Թումանյան փողոց-Տերյան փողոց-Հյուսիսային պողոտա երթուղով, որտեղ մասնակիցները ժամը 13:00-ին կմիանան Հայաստանի արհմիությունների Կոնֆեդերացիայի կազմակերպած երթին և շարունակելով ՀԱՄԿ-ի երթուղով, երթը կավարտեն ՀԱՄԿ-ի շենքին հարող տարածքում ժամը 15:00-ին:

Երթի մասնակիցների սպասվող թիվը մոտ 600 է:

Երթի ժամանակ կօգտագործվեն բարձրախոս, դրոշներ և պաստառներ՝ «Մայիսի 1-ը՝ Աշխատանքի օր», «Սոցիալականը՝ նյութականից առաջ», «Մարդը գերագույն արժեք է», «Հարկային արդարությունը անհրաժեշտություն է», «Հանրային ծառայողներին արժանապատիվ աշխատավարձ» և այլ կարգախոսներով:

Կից ներկայացնում ենք պետական ռեգիստրում ճյուղային հանրապետական միության գրանցման վկայականի, միության նախագահի անձնագրի պատճենները և ճյուղային հանրապետական միության նախագահության որոշումը երթն անցկացնելու մասին:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝
ՃՀՄ նախագահի՝ [signature] Ա. Ասատրյան

151508.2

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
№ 19/32882 17 ԱՊՐ 19 թ.

Հասցե՝ 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3, 501 ս.
Address: 26/3 V. Sargsyan st, office 501, Yerevan, 0010
Адрес: 0010, г. Ереван, ул. В. Саргсяна 26/3, офис 501,
Tel: +374 10 580582 URL: www.arhmiutyun.org Email: profrosgu@gmail.com Facebook: facebook.com/arhmiut